

ԱՆՏԻՊ ԷՉԵՐ ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻՑ

ՊԵՏՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Հայ ականաւոր բանաստեղծ Աւետիք Իսահակեանի գրական ժառանգութեան հաւաքման ու հրատարակման ուղղութեամբ մեծ աշխատանքներ են կատարուել: Անսքող հետաքրքրութիւն է ներկայացնում յատկապէս բանաստեղծի նամականին, մասնաւորապէս հանրութեանն այսօր նամակները: Յայտնի է, որ նա նամակներ է գրել 1889—1957 թուականների ընթացքում, մօտ 70 տարի եւ, ինչպէս հաւաստում են հմուտ իսահակեանագէտներ Արամ եւ Արմիկ Ինճիկեանները, այդ նամակների ամբողջական հրատարակութիւնը կը կազմի մի քանի հատոր: Յայտնի Վարպետի նամականուց հրատարակուել է միայն մի փոքր մասը: Անշուշտ, Իսահակեանի բոլոր նամակները չէ, որ յայտնի են. ապագայ պրպտումները ի յայտ կը բերեն նոր միաւորներ, որոնք ցրուած են զանազան արխիւներում, շատերն էլ սեփականութիւնն են անհատների: Այս իմաստով Վարպետի իւրաքանչիւր նամակի յայտնաբերումն ու հրատարակումը, ինքնրստինքեան, պատմա—մշակութային իրադարձութիւն է եւ, ըստ ամենայնի, խրախուսելի:

Ստորեւ ընթերցողների ուշադրութեանն ենք ներկայացնում Իսահակեանի նշանաւոր հայագէտ Հայկ Պէրպէրեանին (1887—1978) հասցէագրուած 5 նամակները: Այդ նամակները գրուել են Իսահակեանի կեանքի ամենաշրջադարձային պահերից մէկի ժամանակ՝ 1936ին, երբ նա արտասահմանից վերջնականապէս վերադառնում էր Հայաստան: Նամակները կարեւորագոյն տուեալներ են պարունակում բանաստեղծի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ: Այստեղ ի յայտ է գալիս մեծ բանաստեղծն իր առօրեայ հոգսերով, յոյզերով, մտորումներով, ժամանակի հասարակական կեանքի զանազան իրադարձութիւնների իր դիտարկումներով ու տպաւորապաշտ զնահատականներով:

Նամակները տպագրուում են նոյնութեամբ, անհրաժեշտ կէտադրական [եւ ուղղագրական — իւմբ.] միջամտութիւններով, մեր կողմից կատարուած յաւելումները առնուած են փակագծերի [] մէջ:

Նամակները պահպանուում են Հայաստանի Հանրապետութեան Պարբերական Մամուլի Պետական Կենտրոնական Արխիւում, Հայկ Պէրպէրեանի անձնական Փոնդում, թիւ 508, Յուլի 1, գործ 92:

Նրանք արտագրուած են յաջորդաբար՝ 1, 3—4, 5—6, 7 եւ 8—9 թերթերից:

Միրելի Հայկ Պերպերեան.

Օգոստոսի 27ին Չեզ նամակ գրեցի՝ գրադարանիս տեղափոխման արտոնագիր – licence ստանալու համար: Բայց դեռ Չեզնից պատասխան չունեմ: Ենթադրում եմ, որ բացակայ էք Փարիզից:

Անելորդ չեմ համարում կրկնել, որ գրադարանս կազմուած է 8 արկղներից՝ բոլորը միասին կը կշռեն 530 քիլօ, բայց թուղերի, կապերի ատելումով՝ 550 քիլօ: Տեղափոխութիւնը եւ ապահովագրական ծախսերն միասին 500 ֆրանքից ատելի [կ'արժենան], երեւի: Արտոնագիրը պիտի ուղարկուի Բաթումի վրայ. «Հայաստանի Սովնարկումին»⁴, նուէր Պետ[ական] Գրադարանին՝ Բարեգործականի կողմից»⁵: Երկու օրինակ արտոնագիր, մէկը ուղարկուելու է Բաթում մաքսատան վրայ, միւսը՝ Երեւան գրադարանին, գրադարանի վարիչ Ա. Մարտիկեանին:

Ստամբուլիս դարմանումը դեռ շարունակուած է, մի 8 անգամ էլ պիտի լինի, մինչեւ Մեայտեմբերի] 15ը: Զգիտեմ մինչեւ այդ օրը կը ստանա՞մ արտոնագիրս, որ արկղներս յանձնեն տրանսպորտի ընկերութեանը: Մեկնելս կախուած է այդ արտոնագրից: Յետոյ, նաւերը մեկնում են շաբաթը մի անգամ եւ վաղօրօք պիտի գրուել, հերթի սպասել: Բաթումի հետ ուղղակի կապ չկայ, պիտի մի քանի տեղ փոխենք նաւերը:

Այս բոլոր դժուարութիւնների վրայ անելացաւ եւ մի ուրիշը: Նստային ընկերութիւնները օտարներից միայն օտար դեւիզով են տոմսեր վաճարում: Մենք օտար դեւիզ չունենք, ունեցածներս [իտալական] լիրա է, [որ] չի ընդունում:

Այս բոլորը ի մկատի ունենալով գրեցի Պ.Վ. Մալեզեանին⁷, որ բարի լինի Մեայտեմբերի] ամսականս՝ *ուղարկելու ինչ*, հեռագրով [ընդգծումը՝ նամակագրին – Պ.Յ.], եւ այն պայմանով, որ ինձ այստեղ ֆրանս[իական] ֆրանք վճարեն հետեւեալ բանկով՝ Banca Francese et Italiana per l'America, որ կապ ունի Roma commerciale Italianaի [հետ]: Այդ բանկը Փարիզ Մեծ Օպերայի մօտն է գտնում: Եթէ ուղարկէք ամսականս, որ կասկած չունեմ (որովհետեւ ստոյգ գիտեմ, որ քանի դեռ ճամբու վրայ եմ, Երեւանից կարգադրութիւն չի լինի, որ դադարեցնէք վճարումն ինձ), գրադարանիս տեղափոխման ծախսերը կը հոգան այդ գումարից:

Խնդրում եմ փութացնես արտոնագրի ստացումը եւ իմացնես ինձ իսկոյն, եւ պ. Վ. Մալեզեանին նոյնպէս պարզես կացութիւնս:

Միրով եւ բարեւներով
Չերդ Աւետիք Բասիակեան

Բ.

Վենետիկ, 15 Սեպտեմբերի, 1936

Սիրելի Հայկ Պերպերեան,

Օնորհակալութեամբ ստացայ նամակդ՝ եւ արտօնագիրը, նորից շնորհակալութիւն:

Հիմա էլ զբաղուած եմ իտալական կառավարութիւնից արտօնութիւն ստանալու՝ երկրից դուրս ապրանք ուղարկելու համար: Դա՝ [2 անընթ.] մի երկու օր էլ այդ կը քաշէ:

Չկարողացանք երէկուայ մեկնող նստով գնալ, որովհետեւ թէ՛ դարձանումս է շարունակում (թերեւս մի 8 օր էլ) եւ թէ՛ գրքերի եւ իրերի պատմութիւնը եւ թէ՛ օտար դեիզի հարցը: Յաջորդ նաւը կը մեկնի Սեպտեմբերի 23ին, տոմսերը վաճառուած են, տոմսեր կարելի է գտնել միայն Սեպտեմբերի 30ի նախն:

Շա՛տ տառապեցի, թէ՛ հիւանդութեանս պատճառով, թէ՛ գրքերի եւ գոյքերի եւ թէ՛ այդ տոմսերի, դեիզայի, արտօնագրերի: Եւ գիտցիր որ նաւերը ուղիղ Բաթում չեն գնում, այսինքն ուղղակի, այլ նախից նաւ պիտի փոխուենք Աթէնք, Կ. Պոլիս, Կոստանցա...

Լաւագոյն բանը այն եղաւ այս տառապանքներինս մէջ, որ հիւանդութիւնս անցաւ, եւ մէկ էլ՝ Պարթենոնը՝ պիտի տեսնեմ, զոնէ մի անգամ:

Սիրելի Հայկ, երկրորդ նամակիս մէջ գրել էի, որ Սեպտեմբերի ամսականս ուղարկէիք: Պատուիրած նամակն էլ նոյն իմաստով գրել էի պ. Վ. Մալեգեանին, որ ինչպէս գրում էք, բացակայ է: Եթէ վերադարձել է, կը խնդրէի արագացնէիք առաքումը: Եթէ ինչ-ինչ նկատառումներով կը դժուարանան վճարել ամսաթոշակս, խնդրում եմ հեռագրէք Երեւան, հարցրեցէք կառավարութեանը, որ Խահակեանը խնդրում է Սեպտեմբերի ամսականը Վենետիկից, ճամբու վրայից: Չարժէ ի հարկէ, սար ու ձոր ընկնել: Խնդիրը շա՛տ պարզ է: Գրքերի առաքումը, յարակից ծախսերը եւ ակամայիցս իմ դեգերելը Վենետիկ, շա՛տ ներգործեցին իմ նիհար միջոցների վրայ:

Չերմագին բարեկներով: Կը խնդրէի շուտով մի երկտողով իմացնել ինձ:

Չերդ Աւետիք Խահակեան

Գ.

Վենետիկ, 26 Սեպտեմբերի, 1936

Սիրելի Հայկ,

Ստացել եմ նամակներդ եւ խորապէս շնորհակալ եմ քո իսկական բարեկամական վերաբերմունքի համար: Չեմ մոռանայ: Բաղձանք ես յայտնում, որ ինչքան հնարատր է՝ ուշ գնամ երկիր եւ զգուշ լինեմ: Վերջինը հասկանում

եմ, բնական է, որ մարդ շրջահայեաց եւ զգուշ պիտի լինի՝ գործի իսկ յաջողութեան համար: Զգուշութիւնը անբարոյական երեւոյթ չէ. ծագում է – արդիւնք է փորձառութեան եւ խելքի: Բայց «ուշ գնալը», համաձայն չեմ: Շատ եմ ցատում, որ հակառակ իմ կամքիս այսպէս եղաւ: Իմ ուշացման ամէն մի ժամը պատճառաբանուած է եւ խղճմտանքի ընդդէմ քայլ չեմ արած¹¹: Լուրջ հիւանդ էի, եւ պրոֆ. Պարտիզեանը փրկեց ինձ¹²: Եթէ ուշացնէի դարմանումը ծանր կացութեան պիտի մատնուէի՝ ստամոքսի դժուարին հիւանդութիւն: Հարկ պիտի լինէր վիրաբուժական գործողութեան, բարդութիւններ եւ Երեւանում...

3–4 տարի տառապում էի եւ Փարիզում չէիմ հասկանում:

Ես կ'ուզէի վաղուց Երեւան լինել¹³, քերես պետք զայի եւ անվախօրէն: Երբեք չեմ վախեցել: Կը կատարէի իմ քաղաքացիական պարտքը հայրենիքիս հանդէպ: Այժմ էլ երբ հասնեմ եւ հարկ եղաւ՝ չեմ ընկրկի: Համոզուած եղիր՝ ինչ որ անեմ Հայաստանում, արած կը լինեմ արհուրեանք, բարոյականութեանք, խղճմտանքով, միմիայն Հայրենիքի գերագոյն շահերի համար:

Միրելի Հայկ, վերջապէս, հիմա ամէն ինչ պատրաստ է: Առողջութիւնս լաւ է, Սեպտեմբերի 30ին մա կ'առնենք դէպի Աթէնք, այնտեղից էլ Կ. Պոլիս, Բաթում: Հոկտեմբերի վերջերին կը լինենք Երեւան: Այսպրանքը կը կատարեմ, ինչ որ ասել ես, նոքագրել եմ: Երեւանից կը գրեմ քեզ:

Մի շաբաթ առաջ, երբ ստացայ 1500 ֆրանք, գրեցի պ. Վ. Մալեգեանին: Եթէ այդ նամակս ձեռքդ անցաւ, կը տեսնէիր, թէ ինչպիսի՝ քաղաքավարութեանք հասկացրել եմ պարոն վարիչին, որ անկողնոյ մտահոգութեան մատնուելու տեղիք չուներ, որովհետեւ ես իմ իրաւունքն էի, որ խնդրում էի: Երեւանը ինձ չի կանչել, ես եմ գնում իմ կամքով, եւ երբ ուզեմ, այն օրը կը մեկնեմ եւ որտեղից էլ որ ուզեմ... վերջապէս: Յանցաւորը ես եմ, որ իմ պահանջին այնպիսի ձեւ էի տուել, որպէս թէ շնորհ է, որ կը խնդրեմ պ. վարիչից:

Հոգեբանութիւն, նրբութիւն չհասկացող մարդիկ եմ:

Նորից շնորհակալութիւն:

Ջերմագին բարեկեցող

մնամ սրտով Չերդ՝
Աւետիք Իսահակեան

Դ.

Վենետիկ, 3.X.1936

Միրելի Հայկ Պերպլերեան,

Պիտի զարմանաք, անշուշտ, որ տակաւին Վենետիկում եմ: Ամէն բան պատրաստ էր՝ նաւը, գոյքերը յանձնուած... Բայց Միլանի կոնսուլատի անփութութեան պատճառով, ստիպուած եղանք մի շաբաթ յետաձգելու մեկնումը: Կը մեկնենք 7 Հոկտեմբեր[ին]: Կարծում եմ, որ այլեւս արգելքներ չեն ծագի:

Արդ, եթէ Երեւանից մի որեւէ կարգադրութիւն ստացած լինէք ինձ համար, կը խնդրէի հեռագրով ինձ իմաց տալ:

Ջերմագին բարեկեցող
Չերդ Աւետիք Իսահակեան

Միրելի Հայկ Պերպերեան,

Նամակս գրում եմ Ռումանիայի նաւահանգստից, ուր մնալու ենք ամբողջ 30 ժամ: Հիմա այստեղ ձմեռ է, ձիւն եւ ցուրտ, եւ ծովը փոթորկայոյց: Պարագաներն այնպէս դասաւորուեցին, որ ուշ աշնան հասաւ Հայրենիք գնալս:

Արդէն 13 օր է ծովերի վրայ ենք՝ սկսած Աթենքից, ուր ասե՛ս չեղանք՝ Յունական կղզիներ, Չմիվանա, Վոլօ, Սալոնիկ, Ալեքսանդրապոլիս, Ստամբուլ, Վառնա, սրանից յետոյ էլ Օդեսա, ապա Բաթում: Տակաւին 6 գիշեր ունենք ծովի վրայ անցկացնելու, իսկական մի ամբողջ ողիսական:

Միրելի Հայկ, Վենետիկից չկարողացայ Չեզ նամակ գրել, այնքա՛ն զբաղուած էի: Աթենքից մի պոստքարտ գրեցի 300 տոլարի գումար ստացած լինելս իմացնելու համար, բայց չուզեցայ երկար գրել, որովհետեւ Յունաստանում, դիկտատուրայի շնորհիւ, շա՛տ խիստ գրաքննութիւն կայ, գրաքննիչը հայ է (հայերէնի համար) եւ դաշնակցական մէկը, որ, ուղղակի չար ոգի է հանդիսացել ոչ-դաշնակցական հայերի գլխին եւ լրտեսի դեր է կատարում: Նամակների իմաստը խեղափոխում է եւ նամակների բովանդակութիւնը դաշնակցական շրջանների սեփականութիւնը դարձնում:

Ուզում էի գրել, թէ այ, Վ. Մալեզեանի Երեսան տուած հեռագիրը, թէ կարելի՞ է ամսաթոշակս վճարել, կառավարութիւնը համաձայնութիւն է տուել եւ կարգադրել միանուագ տալ 400 տոլար: Ես լուր չունէի այդ մասին, Աթենք նամակ առայ որդուցս, որ բացատրել էր եղելութիւնը: Եթէ այ, Մալեզեանը չհեռագրէր, այդ անակնկալը տեղի չէր ունենայ: Այդ տեղից ինչ մորալ ուզում է, թո՛ղ հանձ պարոն վարիչ-քարտուղարը: Ռուսն ասում է այդ առթիւ՝ չկայ չարիք առանց բարիքի:

Միրելի ընկեր Հայկ, Աթենք մնացի չորս շաբաթ, առաջին օրերը շա՛տ քափառեցի, շա՛տ տեղ եղայ, շա՛տ բան տեսայ՝¹⁴: Ամբողջապէս շրջապատուած էի հայերով, ծանօթ-անծանօթ, թէյասեղան կազմակերպեցին, բայց կառավարութիւնը արգելեց դաշնակցականների ցուցմունքների վրայ, որպէս թէ՛ ես համայնավար եմ եւ եկել եմ պրոպագանդի: Հակառակի պէս այդ օրերը ՀՕԿի՝¹⁵ ընդհանուր (մասնաճիւղերի) ժողով էր, ուր հաւաքուած էին Յունաստանից շատ ՀՕԿիստներ: Նոյնիսկ արգիլեցին յոյն թերթերի մէջ իմ մասին գրել, գալուս եւ մեկնելուս մասին: Դաշնակցականները իրենց *Նոր Օր* թերթով՝¹⁶ պարզապէս լրտեսի գործեր են կատարում, ամօ՛ք:

Դժբախտաբար, քափառումներիս հետեւանքով ծանր տեսակի հարբուխ (կրիփ) ունեցայ՝ կոկորդի եւ քթի բորբոքում, նոյնիսկ վիրաբուժական թեթեւ գործողութիւն ունեցայ: Գնում ենք դանդաղ, մի քափառող, բեռներ ընդունող իտալական նաւով (ուրիշ նաւ չկայ Բաթում գնացող): Ժամերս անցնում են ընթերցումով, գրելով եւ դիտելով:

Եթէ տարերքը ուզենայ, հին խօսքով, եթէ Աստուած կամենայ, Դեկտեմբերի 1ին կը հասնենք Բաթում: Հայ[աստանի] կառավարութիւնը առանձին

վագոն է ուղարկելու մեզ, գրքերը եւ մեր իրերը ընդունելու: Որդիս¹⁷ եւ ուրիշները դիմաւորելու են մեզ¹⁸: Յաջորդ ցամաքը բախտ կ'ունենամ Երեւանից գրելու, որտեղից յոյս ունեն լաւ բաներ հաղորդելու Ձեզ¹⁹:

Մնաս բարեաւ, սիրելի ընկեր Հայկ: Յատկապէս շա՛տ եւ շա՛տ շնորհակալ եմ քեզնից եւ լաւ զգացումների համար, որ յայտ ես քերել իմ նկատմամբ միշտ:

Սիրով Ձերդ անկեղծ՝
Աւետիք Իսահակեան

ՃԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Տես՝ *Աւետիք Իսահակեանի Նամակները*, Մատենաշար Յուսաբերի, Գահիրէ, 1959: Արամ Ինճիկեան, *Աւետիք Իսահակեան, Երկերի Ժողովածու վեց հապորով*, հատոր 6, Երեւան, 1979, էջ 396, Երեւան, 1977:
2. Հայկ Պերպլերեանի թողօնի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այդ ցամաքը, գոնէ մեզ յայտնի նիւթերի շրջանակում, չի պահպանուել:
3. Նոյն օրերին՝ Հոկտեմբերի 13ին, որդուն՝ Վիգէն Իսահակեանին գրած նամակում Իսահակեանը կրկին հաստատում է, թէ իրօք գրադարանը կազմուած է եղել ութ արկղներից, տես՝ *Ժողովածու*, էջ 329:
4. Այսինքն՝ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, որ այն ատեն կոչում էր Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:
5. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ղեկավարութիւնը նման քայլի էր դիմել՝ խորհրդակցելով Հայաստանի կառավարութեան նախագահ Սահակ Տէր Գաբրիէլեանի հետ (մինչեւ վերջինիս ձերբակալութիւնը), որի շնորհիւ մաքսային անհրաժեշտ վճարումները կիսով չափ կրճատուելով՝ թեթեւացնում էին նաեւ Իսահակեանի անձնական ծախսերը:
6. Այսինքն՝ օտար դրամանիշով:
7. Խօսքը գրող, թարգմանիչ, ազգային-հասարակական գործիչ Վահան Մալեգեանի (1871–1966) մասին է, որն այդ տարիներին վարում էր ՀԲԸ Միութեան ընդհանուր վարիչ-քարտուղարի պաշտօնը: Արդարեւ, Չարեհ Նուպարի ՀԲԸՄ նախագահութեան շրջանում (1932–1940) Միութեան համազարդութային աշխատանքները հիմնականում զլխատրում էր Մալեգեանը:
8. 1930 թուականից սկսած, երբ Իսահակեանը հաստատուեց Փարիզում, Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը իրաքանչիւր ամիս կանոնաւորապէս նրան վճարում էր կենսաթոշակ՝ շուրջ 500 ֆրանքի սահմաններում, որը, Սահակ Տէր Գաբրիէլեանի հետ պայմանադրութեան համաձայն, բանաստեղծին էր տրուում ՀԲԸՄի Փարիզի կենտրոնական գրասենեակից: Այդ գումարը մի կերպ էր բաւարարում Իսահակեանների ընտանիքի կարիքները, այն ակներեւ է դառնում 1932թ. Յունիսի 6ին Նիկողայոս Իսահակեանին յղուած նամակից. «Փողի կողմից շա՛տ նեղ ենք, որովհետեւ կառավարութիւնից (Խորհրդային Հայաստանի – Պ.Յ.) ստացած իմ կենսաթոշակը չի բաւականում, կեանքը թանկ է» տես՝ *Ժողովածու*, էջ 289:
9. Պերպլերեանի այդ նամակը մեզ անյայտ է, Իսահակեանի թողօնի նիւթերում այն բացակայում է: Մոյն եւ համանման այլ փաստեր, ցոյց են տալիս, որ բանաստեղծի նամականին զգալի կորուստներ է ունեցել մինչեւ Գրականութեան եւ Արուեստի

Թանգարանում հանգրուանելը:

10. Պարթենոն – իմաստութեան աստուածուհի Աթենային նուիրում տաճար. կառուցուել է Ք.ա. 447–432ին, Աթենքում:
11. Ակնարկում է իր գրադմունքներին ՀՕԿում որպէս փոխնախագահի: Բացի այդ, Իսահակեանը եղել է ՀԲԸՄի եւ ՀՕԿի համատեղ կազմակերպած բազմաթիւ յանձնաժողովների անդամ, Ներգաղթի Ֆրանսիայի Յանձնաժողովի Կենտրոնական Գործադիր Մարմնի փոխնախագահ, ՀՕԿ ամսագրի խմբագրական կազմի անդամ եւ այլն:
12. Վիզէն Իսահակեանին ուղղուած նամակում եւս շեշտում է այս իրողութիւնը. «պրոֆեսոր Պարտիզեանը կարգին բժշկեց, հիմա շա՛տ լաւ եմ». տես՝ *Ժողովածու*, էջ 328:
13. Գեոեւս 1930 թ. Գեկտեմբերի 30ին Գարեգին Լեւոնեանին յղուած նամակում բանաստեղծը յոյս էր յայտնում, թէ «1931 թուի ընթացքում կը վերադառնամ Հայաստան: Փարիզը լաւ է, բայց Հայրենիքը ամէն տեղից լաւ է: Լաւագոյնն է»: տես՝ *Ժողովածու*, էջ 286: Նոյնը՝ 1931 թ. Հոկտեմբերին գրած նամակներից մէկում. «Ես, երեւի այս վերջին ձմեռն է, որ պիտի անցկացնեմ Եւրոպայում: Գարնանը [1932թ. – Պ.Յ.] կը մեկնեմ Հայաստան»: տես՝ *Ժողովածու*, էջ 287:
14. Աթենքեան անցնջելի տպատրութիւնների մասին բանաստեղծը վառ ու կենդանի գոյներով ներկայացրել է իր *Յիշատակարան*ում. տես՝ *Յիշատակարան*, Երեւան, 1977, էջ 406–418:
15. ՀՕԿ – Հայաստանի Օգնութեան Կոմիտէ:
16. *Նոր Օր*՝ յունահայ ազգային-գրական, քաղաքական օրաթերթ (1923–1940, 1944):
17. Նկատի ունի Վիզէն Իսահակեանին, որ Երեւանում էր արդէն:
18. Իսահակեանը Երեւան է ժամանել 1936թ. Գեկտեմբերի 5ին. տես՝ *Խորհրդային Հայաստան* օրաթերթ, 6 Գեկտեմբեր, 1936, No 281: Բանաստեղծի Երեւանեան ընդունելութեան մասին հետաքրքրական են Լ. Հախվերտեանի յուշերը. տես՝ Լեւոն Հախվերտեան, *Վարպէրը*, Երեւան, 1990, էջ 169–171:
19. Ենթադրելի է, որ Իսահակեանը սկանայ չի կատարել խոստումը: Պէրպէրեանի թողոճում այդպիսի նամակ չկայ: Իսկ Իսահակեանի թողոճում Պէրպէրեանից նրան ուղղուած միայն մի նամակ կայ, այն էլ գրուած 1949 թուականին. տես՝ Ե. Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Արխիւային բաժին, ֆոնդ 61, II բաժին, No 1590:

AVETIK ISSAHAKIAN'S LETTERS
TO HAIK PERPERIAN

(Summary)

PETROS HOVHANNISIAN

Five letters of the renowned Armenian poet, Avetik Issahakian (1875-1957) written between 7 September and 26 November 1936 are published here.

After long discussions with the Soviet Armenian authorities, Issahakian ended his self-imposed exile to Europe and returned home for good in late 1936. On his way back home, Issahakian sent these letters from Venice and Costanza to the Armenologist Haik Perperian, shedding light on the final stages of his return, the procedural details, his encounters in Greece, and the hassle of such a journey.